

ցին մէջ: Այդ լեզուներուն տիրանալ՝ պէտք եղածին պէս օգտուելու համար օտար հեղինակներէ, ինչպէս որ գիտել տուինք վերագոյն, շատ գործնական չէր: Այս էր պատճառը որ երբ մէկ կողմէն կոլոտի Գպրոցը որդեգրած էր այդ լեզուները, իբր յարմարագոյն կապը մտաւորական կեանքի՝ Եւրոպայի հետ, միւս կողմէն մեծ ոյժ եւ դրամ կու տար օտար գրականութիւնը արագապէս հայացընելու համար: Այս գրութեամբ ո՛չ միայն իր Գպրոցը արագ եւ իրական զարգացում ու յառաջդիմութիւն պիտի ունենար, այլ նաեւ Հայ ազգը, որուն անտարբերութիւնը կ'ողջար կոլոտ՝ Խորենացւոյ մը նման, պիտի օգտուէր գտնելով իր առջեւ ընթերցանութեան համար նոր գրքեր, հետաքրքրական նիւթեր:

Տարակոյս չկայ որ շատ գործնական ծրագիր մ'էր այս եւ իր միջոցները ապահով էին ատոր գործադրութիւնը ի գլուխ հանելու համար:

Մատենագրական, ըսենք մանաւանդ թարգմանչական այս բեղմնաւոր գործունէութեան մէջ, եթէ ամենէն յառաջ եւ բնականապէս իր Գպրոցն էր որ կ'օգտուէր, կոլոտ չէր ուզեր, սակայն, որ լուսաւորութեան կարօտ ազգը շատ ետեւ մնար:

Հայ Ազգի լուսաւորութեան մասին կոլոտի տեսութիւնը, զուտ կրօնական հանգամանք մ'ունի: Այս տեսութիւնը դարու ոգին է որ կ'արտայայտէ:

կրօնական խնդիրներ մեծ, շատ մեծ դերեր խաղած են ազգերու ճակատագրին մէջ: Փոքր ազգեր՝ մեծ ազգերու կրօնախօսական շարժումներէն ազդուած են միշտ: Եւ Հայ Ազգին համար իրապէս ճակատագրական նկարագիր մ'ունեցած են կրօնական այն շարժումները, որոնք բխած են մեծ ազգերէն եւ ինքը՝ ատոնցմէ շրջապատուած՝ միշտ կրած է այն շարժումներուն ազդեցութիւնը: Այս երեւոյթը ազգի մը փոքրկութեան արդիւնքը չէ լոկ, այլ մանաւանդ միջավայրին, որ տարօրինակ